ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ գ. Անտառամեջ
Հեռ. / +374/94 01-83-83
E-mail antaramedj.dpr@gmail.com
09 **հունվարի** 2023**թ.**

Ե- 413

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Հայոց լեզու և գրականություն» առարկայի՝ քսաներկու, «Մաթեմատիկա» առարկայի՝ տասնհինգ, «Ֆիզիկա» առարկայի՝ յոթ, «Ռուսաց լեզու» առարկայի՝ տասնհինգ, «Շախմատ» առարկայի՝ չորս դասաժամերի ուսուցիչների թափուր տեղերը համալրելու համար մրցույթը տեղի կունենա 2023 թվականի հունվարի 20-ին ժամը 10:00-ին Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը :

Առդիր մեկ էջ:

Տնօրեն՝ Digitally signed by AZARYAN ARTUR 29098104021
Date: 2023.01.09 16:19:57 AMT
Ա. Ազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայոց լեզու և գրականություն» առարկայի՝ (22 **դասաժամ)**, «Մաթեմատիկա» առարկայի՝ (15 **դասաժամ)**, «Ֆիզիկա» առարկայի՝ (7 **դասաժամ)**, «Ռուսաց լեզու» առարկայի՝ (15**դասաժամ)**, «Շախմատ» առարկայի՝(4 **դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար**:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի հունվարի 5-ից մինչև հունվարի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 **թ. հունվարի 20-ին՝ ժամը** 10:00-**ին** Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գյուղ Անտառամեջ 2-րդ փողոց շենք 11:

Տեղեկությունների համար զանգահարել 094-01-83-83 հեռախոսահամարով: